

ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՅՒՆ
(Գ.ՄԱՅԱՐՈՒ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ)

Գուրգեն Մահարին բանաստեղծական իր առաջին քայլերն արեց 1910-ական թվականներին, երբ հայրենիքի մշուշապատ ու ողբերգական ներկան ու անորոշ ապագան լավատեսության ոչ մի մշույլ չէին ներշնչում:

Արևմտյան Հայաստանն ամբողջովին ամայացել ու հայաթափվել էր: Արևելյան Հայաստանը, որ պարբերաբար ենթարկվում էր թուրք ու ազերի կանոնավոր զորքերի ու հրոսակախմբերի ասպատակություններին, օրհասական օրեր էր ապրում. միայն Երևանի նահանգում 600 հազար գաղթականներ կային, որոնք մասսայաբար զոհ էին գնում սովին ու համաճարակներին: Այդ օրերի մասին Գ.Մահարին, որ հրաշքով կենդանի է մնում ու գաղթականների հետ հայտնվում Կովկասում, հետագայում գրում է. «Ես էջմիածին ընկա, հետո Դիլիջան. հետո Երևան, քաղաքից քաղաք. փողոցից փողոց, որքանոցից որքանոց: Երկրում քաղց էր, աղքատություն, և մահն էր սավառնում քաղցի թևերով, մեռնում էին մարդիկ, ով որտեղ կարող էր՝ մայրերի վրա և քաղաքային այգում, եկեղեցիների բակերում և կայարանամերձ այգիներում»¹:

Համատարած հուսալքություն էր, մղծավանջ, «անդեկ ու անառագաստ» ժողովուրդը դրությունից դուրս գալու ոչ մի ճանապարհ չէր տեսնում. գերիշխում էին փախուստի, հեռացման, անամոք կարոտի, անսփոփ տառապանքի տրամադրությունները:

«Փոքր էի, երբ կորցրի հորս, մի քիչ ավելի մեծ, երբ կորցրի ծննդավայրս: Ծննդավայրիս հետ կորցրի առմիշտ տատիս և մորս՝ ժամանակավորապես: Չքացավ քարտեզի վրայից այն, ինչ կոչվում էր Արևմտյան Հայաստան, և մեկուկես միլիոն հայերի արյունից մի անգամ էլ ծաղիկները կարմրեցին, և վերջապեսները արյուն հազան»²:

Գ.Մահարու առաջին բանաստեղծություններն այս ապրումների արտահայտություններն էին լցված հեռուներում թողած հայրենական տան կարոտի մորմոքներով, որք մանկության մռայլ գույներով, որոնց մեջ, սակայն, կային նաև արևային գույների պայծառ ու լուսավոր առկայծումներ:

«Հելիկոնի մուսաների հետ գաղտնի տեսակցությունները» տեղի էին ունենում Արևելյան Հայաստանի որքանոցներից մեկում, երբ Գ.Մահարին ընդամենը 13 տարեկան էր:

¹ Գ.Մահարի, Ինքնակենսագրություն (Բնագրի հետ համեմատված, ճշգրտված և լրացված), «Նոր դար», 2004, թ. 1-2, էջ 9:

² Նույն տեղը, էջ 10:

Իր առաջին բանաստեղծությունը նա գրում է Ռաֆֆու «Խենթը» կարդալուց հետո. «Ռաֆֆու «Խենթը» վերջացնելուց հետո փորձում եմ քնել, բայց ոչ մի կերպ չեմ կարողանում: Պատկերներն ու տեսիլները խժվում են գլխիս մեջ: Ննջարանում տիրում է խորին լռություն... Ես վեր եմ կենում, հագնվում եմ, անցնում եմ սերտարան, վառում եմ լուսք, վերցնում մի թուղթ և վերցնում գրիչը: Ինչի՞ համար եկա այստեղ, ի՞նչ անելու եկա... Սերտարանի լռության մեջ ճռռում է գրիչը, և թղթի վրա դուրս է գալիս մի բառ՝ «Հայրենիք»: Զիմիական թանաքի բուրմունքը շոյեց իմ ռունգները, և ես, ասես այդ բուրմունքով արբած, գրեցի իմ առաջին բանաստեղծությունը՝ հայրենքի մասին»³:

1917 թվականին տպագրվում է Գ.Մահարու առաջին բանաստեղծությունը. «Մի օր ցրիչը պարզեց ինձ «Աշխատանք» թերթը, որի երկրորդ էջի վրա տեսա իմ մի բանաստեղծությունը»⁴:

Մանկական հուշերով գրված այս բանաստեղծության մեջ արդեն երևում են այն հունդերը, որոնք հետագայում ծիլեր պիտի տալին.

Անուշ օրորով, հեզուն ու նազուն
Կթափվեր ծյունը մեր բաց երդիկեն,
Քուլս կերազե մեր պառավ կատուն,
Ու թոնրին մեջ պուտուկներ կերգեն:
Չեթի ճրագը սյան մեջքին կպած,
Ծերուկ կատվին պես կքաշե քուն,
Մինչ կիջնա ծյունը մեր երդիկեն բաց,-
Թոնիրը տաքուկ, տաքուկ մեր տանտուն...⁵

Ի՞նչ կարող էր գրել որբանոցի սանը հայրենիքի մասին: Բնականաբար՝ «տրտում, դառնագին» լացող եղնիկների, «խորշակահար նարգիզների ու սմբուլների», լճակին մեռնող ծաղիկների մասին ու պիտի հորդորեր «սևեր հագնել» ու իջնել «անտառը սուգի».

Եղնիկները կուլան տրտում, դառնագին,
Նարգիզները խորշակահար են դարձեր,
- Սևեր հագիր, շուշան աղջիկ ցայգային,
Սմբուլներդ խորշակահար են դարձեր:
Ծավի լիճը ալ չի ժպտար ոչ ոքի,
Ու լճափին ծաղիկները կմեռնին,
- Սևեր հագիր, իջնանք անտառը սուգի,
Հոն լճափին ծաղիկները կմեռնին⁶:

Պատանի Գ.Մահարին «որբանոցային շրջանում» ծավալում է «բեղմնավոր» գործունեություն: Գ.Աճեմյանը, ղեկավարվելով Գ.Մահարու ժլատ հիշատակումներով, պարզել է, որ «նախախորհրդային մամուլում («Վան-Տոսպ»,

³ Նույն տեղը, էջ 36:

⁴ Նույն տեղը, էջ 9:

⁵ Գ.Մահարի, Երկեր, հ. 2, Ե., 1967, էջ 338:

⁶ «Ժողովուրդ», Ե., 1918, ք. 24:

«Հայաստանի ծայն», «Առավուտ», «Ժողովուրդ», «Հորիզոն») հրապարակված են վաթսուհից ավելի, հիմնականում արևմտահայերենով գրված բանաստեղծություններ: Դրանց թվում կան այնպիսիները, որոնք ունեն հետաքրքիր նախապատմություն: Վաղ հոգվածներից մեկում Մահարին գրել է. «Ավելորդ չենք համարում և մեջտեղ բերել ռուսահայ մի պարոնի դասախոսությունները: Նա շրջեց բոլոր որբանոցներն ու հաւաքելով որբերի արտադրությունները այստեղ և լծիֆլիսի մէջ կարդաց երկու դասախոսություն: Դարձյալ նույն պարոնը Մոսկվայէն նամակով մը դիմեց տեղվոյս որբանոցներու պաշտօնետութեան, ուզելով գրող որբերու կողմէ խմբագրած թերթերը, բայց չարաբաստիկ քաղաքական փուլերը արգելք հանդիսացան տոյն ձեռնարկութեան և ամէն ինչ մոռացվեց...» («Որբ գրողները և «Ժողովուրդը»: «Ժողովուրդ», Եր. 1918, ք. 34)⁷:

Գ.Մահարին ի նկատի ունի Կ.Միքայելյանին, որի մասին Ա.Ղանալանյանը «Поэзия Армении в переводах и оценке В.А.Брюсова» գրքի ծանոթագրություններում գրում է. «Կ.Միքայելյանը զեկուցում կարդաց որբանոցներում ապրող հայ երիտասարդ բանաստեղծների մասին: Դրանց թվին էր պատկանում Գուրգեն Մահարին: Հետագայում այդ բանաստեղծների գործերը Կ.Միքայելյանը հանձնեց Հովհ.Թումանյանին: Թումանյանը հավանեց Մահարու բանաստեղծությունները և առաջարկեց Վ.Բրյուսովին թարգմանել դրանք: Բանաստեղծություններից մեկը կրում էր «Զարթիր, Հայաստանի աստված» վերնագիրը, իսկ մյուսն անվերնագիր է»⁸:

Գ.Մահարու այդ բանաստեղծությունները տպագրվում են Վ.Բրյուսովի կազմած «Поэзия Армении» ավանախում: 1963 թվականին՝ Վ.Բրյուսովի ծննդյան 90-ամյակի օրերին, Ռ.Լուսինյանին հղած նամակում Գ.Մահարին գրում է. «Բրյուսովյան օրերը վերջացան: Եղան հանդեսներ ու հանդիսություններ: Լույս տեսավ նրա «Поэзия Армении»-ին, որի մեջ նաև իմ աշակերտական երկու բանաստեղծությունները՝ թարգմանված Բրյուսովի ձեռքով: Թումանյանն է տվել թարգմանելու, այնպես որ... իմացի, թե ինչ ախպեր ունես»⁹:

Գ.Աճեմյանը ենթադրում է, որ «Հովհ.Թումանյանը ոչ բոլոր բանաստեղծություններն է փոխանցել Վ.Բրյուսովին: Սի քանիսը նա պահել է իր մոտ, որոնցից երեքն այսօր գտնվում են Ե.Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում»¹⁰:

Խոսքը ԳԱԹ Հովհ.Թումանյանի ֆոնդում (դ. 1544) պահվող «Արշալոյս», «Վերջալոյս», «Աղօթողին» բանաստեղծությունների մասին է, որոնք թվագրված են 1916, սեպտեմբերի 15 և ստորագրված՝ Գուրգեն Աճեմեան (Սենարփունի):

⁷ «Նոր դար», Ե., 2004, ք. 1-2, էջ 35:

⁸ Ա.Ղանալանյանը, Поэзия Армении в переводах и оценке В.А.Брюсова, Е., 1963, стр. 405.

⁹ «Նոր դար», 2004, Ե., ք. 1-2, էջ 36:

¹⁰ Նույն տեղը:

Նախահեղափոխական մամուլում Գ.Մահարու բանաստեղծությունները տպագրվել են նաև Գ.Միրիունի, Գուրիս, Գուրգեն Ժածկանուններով: «Արշալոյս», «Վերջալոյս», «Աղօթողին» բանաստեղծությունները մինչև վերջերս անժամոք են եղել ընթերցողին: Առաջին անգամ տպագրվել են 2004 թվականին «Նոր դար» ամսագրում¹¹:

Կարմիր խորան կը բարձրանայ լեռան ետևէ բոցակեզ,
Երազները հոն կը յսկեն վարդակարմիր ու բոսոր,
Ու վրձին մը հոն անտես, ծարպիկ ձեռքէ մը կարծես
Գունագեղէ, կը վրձնէ դույզն ամպերուն հեգաստյոր:

(«Վերջալոյս»)

Տասներեքամյա պատանու առաջին փորձերը ուշադրություն են գրավում նախ կատարողական վարպետության, ռիթմի զգացողության, այնուհետև հետաքրքիր պատկերամտածողության տեսանկյուններից (վարդաթույր վերջալոյս, գիշերաթույր վարագույր, կապտանուշ լազուր, վիրավոր կիսալուսին)։

Գորշ ստվերներ նազանքով ահա ծալ-ծալ կիջանեն,
Վերջալոյսը վարդաթույր կսգեստրի, կը հյուծվի,
Կը հեռանան ամպերը զրկուած իրենց վառ գոյնէն
...Ու գեռ կիջնէ, կը փռուի գիշերաթույր վարագոյր:
Երազ աստղեր նայեցին լուրթ կապտանուշ լազուրէն,
Կիսալուսին վիրաւոր մեղմ բարձրադավ յաղթ լեռնէն.
Նոր երազներ կը ծնեն, նոր երազներ կը բուրեն:

(«Վերջալոյս»)

Գ.Մահարու ստեղծագործության ուսումնասիրողները ուշադրություն են հրավիրում «Արգահասի» գունային համակարգի նուրբ կիսատոների, «զրնգուն գույների», անտեսանելի նրբերանգների վրա, ինչին մենք կանդորադառնանք ոչ միայն «Արգահասի», այլև «Բարդիների», «Վարսակների», «Տիտանիկի» կապակցությամբ: Նշենք, որ այդ համակարգը սկսել է ձևավորվել նրա առաջին բանաստեղծություններում, որոնց մեջ պատանի բանաստեղծը աշխարհին նայում է պայծառ ու լուսավոր հայացքով՝ ի տարբերություն «որբանոցային պոեզիայի» շատ ներկայացուցիչների։

Կը լայնանայ ոսկի ժպտի թովուն ծով,
Ու վարդաթույր վարդակարմիր ամպիկներ
Նաւի մը պէս կը լողան հոն մեղմներ
Արշալոյսի մեծ երկանքի դիմացով:
Լեռներն իրենց մեջքին երիզ են կապեր,
Կը բարբառին բարդիները երագող,
Յոն առուակ մը կ'երգէ երգով մը խոհաբեր,
Ու ուռենին կը մտմտայ կապած շող: (Արշալոյս»)

¹¹ Բանաստեղծությունների ծանոթագրություններում Գ.Աճեմյանը գրում է, որ Գ.Մահարու արխիվում կան տարբեր տարիների բազմաթիվ բանաստեղծություններ, որոնցից շատերը արժեքավոր ստեղծագործություններ են:

Պատանի բանաստեղծը իր ներկայանակը հարստացնում է արևի ոսկեգույնով՝ արևը դիտելով որպես «Հանճարի գաղտնի ուժի» մարմնացում, խորհրդանիշ.

Կը լայնանան ոսկե ժպտի թովուն ծով,
Շող են կապեր լեռներն իրենց յաղթ մէջքին,
Արեւեքը կ'երկնէ հսկայ երկանքով,
Տայր երկիրը սպասումի կապրէ ժամ:
...Կարմիր արեւն ալ բարձրացավ խնդագին
Ամբողջացո՛ւմ գաղտնի ուժի հանճարին:
(«Արշալոյս»)

Գ.Սահարու առաջին բանաստեղծություններում արդեն ուրվագծվում է Արարչի կերպարը, որին հետագայում, հատկապես սիբիրյան պատմվածքներում, հաճախակի է դիմում հեղինակը:

Ծնվելով ու մեծանալով աստվածապաշտ, աստվածավախ ընտանիքում Գ.Սահարին չէր կարող ակնածանքով չլքվել Արարչի նկատմամբ, նրա բարության ու սիրո հանդեպ: Այդ մասին են վկայում «Մանկության» մի շարք էջեր. «Անշուք խորանի խորքից նայում է Աստվածամոր նկարը: Ես բարձրանում եմ խորան և շոշափում նկարը, հետո ինձ թվում է, որ մեղք գործեցի, և իջնում եմ խորանից: Գնում եմ վանքի պարտեզը, հավաքում եմ ծաղիկներ ու թարմ ծյուղեր, բերում, զարդարում եմ աստվածամոր նկարը»¹²:

Արարչի, ավելի լայն առումով աշխարհի, բարու հանդեպ հավատի տրամադրություններն իրենց արտահայտություններն են գտել «Աղօթողին» բանաստեղծության մեջ.

Միշտ երկիւղված, միշտ հնազանդ, համբերող,
Անդաւաճան Քրիստոսի պատգամին,
Հաւատքի ծով մը քո հոգու մէջ շղթայած,
Դուն կաղօթես, դուն կաղօթես, կաղօթես...
Կամ խուցիդ մէջ կանթեղի մը տակ անլոյս
Եւ կամ խարխուլ մատուռին մէջ մենաւոր...
Միշտ երկիւղած, միշտ համբերող, հնազանդ: («Աղօթողին»)

Պատանու համար ամենասարսափելին հավատքի կորուստն է.

Հա՛յր ճգնաւոր, իմ կողմէն ալ աղօթ,
Իմ կողմէն ալ... Հաւատքիս ուժ պակսած է:

«Հելիկոնի մուսաների հետ գաղտնի տեսակցող» Գ.Սահարին, որն առաջին իսկ քայլերից ստեղծագործական լուրջ նպատակադրումներ ուներ, գրական իր առաջին քայլերը պիտի աներ նախ՝ մեծերի հետ իր «հարաբերությունները ճշգրտելով», նրանց ստեղծագործություններում հոգեհարազատ տրամադրություններ, գույներ ու երանգներ փնտրելով, այնուհետև՝ պիտի փորձեր գտնել «ի՛նչ է պոեզիան» հարցի իր պատասխանը:

¹² Գ.Սահարի, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 17-18: